

ճանն այն է, որ 1785-ին Պարիսի եկեղեցիները չբջջապատող բոլոր գերեզմաննոցները ջնջելով ոսկրներու այստեղ փոխադրութեան որոշում արուեցաւ, եւ յաջորդ տարւան ապրիլի 7-ին սրաշտոնական բացումը տեղի ունեցաւ. — իբր Գեանադամբան-Ոսկրանոց :

Որոշման գործադրութիւնն սկսաւ Պարիսի կեդրոնը թունաւորող ամենամեծ գերեզմաննոցէն (Cimetière des Innocents), ուր բարձրացած է հիմա ուտելիզէնի կեդրոնական վաճառանոցը (les Halles): Յետոյ ձեռնարկուեցաւ միւս գերեզմաննոցներու մաքրութեան եւ ոսկրներու փոխադրութեան :

Գեանադամբանիս մէջ ոսկրները թէեւ դրուած են իրարու վրայ, խառն ի խառն, անկանոն, առանց որոշ կարգի, առանց զանազանելու բարիքնը չարիքէն, եւ առանց նշանակելու տէրերուն անունները, բայց գոնէ իւրաքանչիւր ոսկրակոյտին վրայ մասնաւոր ցուցանակով յիշատակուած է անունն այն գերեզմաննոցին ուսկից բերուած են անոնք, նշանակելով նաեւ փոխադրութեան թուականը: Արդ Կեդրատինեանց վանքին անունը կրող ոսկրակոյտին վրայ կը կարդանք՝ 1843, 1848 եւ 1851 թուականները. եւ որովհետեւ ուղեցոյց մը կըսէ, թէ նոյն տարիներուն Բուլվար Հանրի Գ-ի մէջ կատարուած պեղումներու ժամանակ գտնուած բազմաթիւ ոսկրները փոխադրուած են Գեանադամբանները (1), տարակոյս չի մնար թէ Լեւոնի ոսկրներն ալ միասին բերուած դրուած են մի եւ նոյն շեղակոյտին մէջ: Ասոր համոզուելու համար պէտք է յիշել, թէ Լեւոնի տապանաքարը միայն աստանդական եղած է Յեղափոխութեան հետեւանքով, իսկ նշխարները մնացած են իր նախնական գերեզմանին մէջ, Կեդրատինեանց եկեղեցին: Ասկէ զատ՝ գիտենք թէ Բուլվար Հանրի Գ կանցնի ճիշտ Կեդրատինեանց եկեղեցիին գետնին վրայէն:

Ուրեմն՝ Լեւոնի ոսկրները Սէն-Դընիսի հիմալուան շինծու գերեզմանին մէջ չեն, այլ Պարիսի մէջ՝ Մոնրուփի Գեանադամբան-Ոսկրանոցը :



(1) E. Gerards, *Les Catacombes de Paris*, br. 161 :